Գիտնականները վրդովված են

1 ԳԱԱ-ի Նուրբ օրգանական քիմիայի, Ֆիզիկայի, Մեխանիկայի ինստիտուտների տնօրեններն ու առանձին ակադեմիկոսներ իրենց գնահատականները տվեցին ծրագրին, չբացառելով բարեփոխումների անհրաժեշտությունը, մասնավորապես, ԳԱԱ-ի ղեկավարության փոփոխությունը. խոսեցին իրենց պատուհասած վիճակի ու սպասվելիքի մասին: Վրդովվեցին ստացող և ակնկալվող աշխատավարձի առիթով: Առաջարկեցին այդքան աշխատավարձով և մեկ ամիս մշտական հսկողության տակ այդքան վարձատրել նախարարներից կամ փոխնախարարներից մեկին և նոր միայն խոսել 28 հազար դրամ աշխատավարձով ապրողի մասին:

Նրանք, պարզվում է, այս անգամ վճռական են տրամադրված և ցանկանում են դիմել անգամ վճռական գործողությունների, որպեսզի պահպանեն գիտության իրենց տունն ու պատիվը: Եթե հարկ լինի, խոստանում են դիմել բողոքի ցույցերի, թեև նրանցից ոմանք, այդ թվում Տեխնոկրատների միության նախագահ Սամվել Սարգսյանը ոչ մի հույս չունի, որ այդպիսի միջոցառումներով կարելի է լուծել խնդիրը:

Հայաստանի ԳԱԱ-ում խմորվող իրադարձությունների ու ճակատագրի մասին առավել ընդգրկուն վերլուծական հոդվածը կարդացեք թերթի հաջորդ համարում:

— Հ.Գ.

Գիտնականները վրդովված են

Հայաստանի ԳԱԱ ակադեմիկոսները հավաքվել էին քննարկելու, թե ի՞նչ է լինելու իրենց տան ճակատագիրը: Գիտնականները վրդովված են: Նրանք ծանոթ են ՄԱԿ-ի զարգացման ծրագրի ներկայացրած կարծիք-եզրակացությանը՝ ԳԱԱ-ում բարեփոխումներ իրականացնելու մասին, մինչդեռ ՀՀ կրթության և գիտության նախարար Սերգո Երիցյանը, ինչպես ՀՀ կառավարությունում հաշվետվության ժամանակ էր հայտնել մեր թղթակցին, ծանոթ չէ դրան: Ինչևէ...

3